

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԵԼՈՒՄ. ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Անահիտ Բեքարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4

Էլ. հասցե՝ abekaryan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 25.09.2021, գրախոսվել է 12.04.2022,

ընդունվել է տպագրության 07.03.2022

DOI:10.53548/0320-8117-2022.1-165

ՀՏԴ: 929:82 Շեքսպիր + 02(479.25)

Ներածություն

Հայ անվանի գրականագետ և արվեստաբան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադիր տնօրեն (1958-1987) Ռուբեն Զարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով 1964 թ. Արվեստի ինստիտուտում ստեղծվեց Խորհրդային Միությունում առաջին **Շեքսպիրյան գրադարանը**, իսկ 1966-ին՝ առաջին **Շեքսպիրագիտության հայկական կենտրոնը**:

Շեքսպիրյան գրադարան հիմնելու մտահղացումը

1964 թ. ապրիլի վերջին, ինչպես ամբողջ աշխարհը, այնպես էլ հայ ժողովուրդը մեծ շուքով տոնեց անգլիացի հանճարեղ թատերգու, մարդկության մեծ բարեկամ Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը: Այդ օրերին կազմակերպվեցին բազմաթիվ հանդիսավոր երեկոներ, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնն այդ առթիվ ապրիլի 19-ին, 20-ին, 22-24-ին ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Վ. Աճեմյանի բեմադրությամբ ներկայացրեց «*Ռոմեո և Ջուլիետ*» երեք գործողությամբ ողբերգությունը (թարգմանիչ՝ Խ. Դաշտենց), հայ պարբերական մամուլում հրապարակվեցին մի շարք հոդվածներ Շեքսպիրի և

շեքսպիրագիտության մասին¹: Այդ բոլոր միջոցառումների կիզակետը դարձավ 1964 թ. ապրիլի 25-ին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում կայացած հանդիսավոր երեկոն: Մամուլի վկայությամբ՝ «Ապրիլի 25-ին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը «գրավել էր» Շեքսպիրը: Այդ անունը այստեղ էր բերել մայրաքաղաքի արվեստի և գրականության գործիչների, նրա դրամատուրգիայի բազմաթիվ երկրպագուների, հանդիսատեսների...»²: Այդ երեկոյի ընթացքում փայլուն ելույթ է ունեցել նաև ինքը՝ անվանի արվեստաբան Ռուբեն Զարյանը: Ինչպես վերհիշում է արվեստաբան Լև Վազներն իր հակիրճ, բայց ընդգրկուն հոդվածում, որը Ռ. Զարյանի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ տպագրվեց «Երեկոյան Երևան» թերթի 1969-ի դեկտեմբերի 8-ի համարում, «Այդ ամենը սկսվեց 1964 թվականի ապրիլյան այն երեկոյից հետո, երբ Ռուբեն Զարյանը զեկուցում կարդաց Շեքսպիրի 400-ամյակին նվիրված նիստում: Օպերայի թատրոնում հավաքված Շեքսպիրի հարյուրավոր հայ երկրպագուները երկար պահեցին գիտնականին, որ նրանց առաջ բացել էր պատկերացումների ու զգացումների մի նոր աշխարհ»³:

Անվանի արվեստաբանը, ոգևորված Շեքսպիրի երկրպագուների ջերմ ու սրտառու ընդունելությունից, զգալով, որ «իր խոսքը տպավորություն թողեց»⁴, վերստին համոզվեց, որ Շեքսպիրը մեր ժողովրդին շատ է անհրաժեշտ: «Ահա այդ օրը՝ երեկոյան», իր «տան մեջ, գիշերային խորին լռության մեջ ծնվեց **շեքսպիրյան գրադարան** (ընդգծումը մերն է – **Ա.Բ.**) ստեղծելու գաղափարը»⁵: Ինչպես վերհիշում է Ռ. Զարյանը, նա իր անձնական գրադարանից առանձնացրել է Շեքսպիրին վերաբերող գրքերը՝ նպատակ դնելով հավաքել շեքսպիրյան գրքեր և իր «տան գրապահարանի հիմա մի փեղկը, իսկ հետո՝ առանձին գրապահարան հատկացնել շեքսպիրյան գրքերին»⁶: Ունենալով շատ ծանոթներ արտասահմանում՝

¹ Տե՛ս, օրինակ, Ռ. Զարյան 1964 (Ադամյանը շեքսպիրագետ), Առաքելյան 1964 (Շեքսպիրի տաղանդավոր թարգմանիչը), Փափազյան 1964 (Շեքսպիրը), Սողոմոնյան 1964 (Հանճարեղ անգլիացին), Բորյան 1964 (Հավերժ ժամանակակիցը), Զարյան 1964 (Անշեջ հանճարը), Հովհաննիսյան 1964 (Հավերժ մարդկության հետ) և այլն:

² Մարդկության մեծ բարեկամը 1964:

³ Վազներ 1980, 22:

⁴ Զարյան 2012, 394:

⁵ Զարյան 2012, 394:

⁶ Զարյան 2012, 395:

Ռ. Զարյանը համոզված էր, որ ժամանակի ընթացքում կարող է ստեղծել շեքսպիրյան գրքերի հարուստ հավաքածու:

Դեռևս պատանեկության տարիներից Շեքսպիրի հանդեպ տածած սերը, իսկ հետագայում մեծ ողբերգակ Վահրամ Փափագյանի՝ Շեքսպիրի հերոսների անգուգական մարմնավորումները և անվանի թարգմանիչ Հովհաննես Մասեիյանի՝ Շեքսպիրի ստեղծագործությունների սքանչելի թարգմանությունները պետք է որ արվեստաբանին «ստիպեին» հանգելու այդ մտքին: Հետևաբար Ռ. Զարյանի համար անձնական գրադարանում շեքսպիրյան գրքերի «մինի գրադարան» ստեղծելու գաղափարի իրականացումը միանգամայն օրինաչափ էր և սպասելի: Բայց, բարեբախտաբար, «այն, ինչ մտահղացված էր որպես անձնական հավաքածո, դարձավ հասարակական»⁷: Արվեստաբանը, խանդավառված իր նոր մտահղացմամբ, սովորության համաձայն, այն քննարկել է ընկերների հետ՝ ակնկալելով նրանց հավանությունն ու աջակցությունը: Ռ. Զարյանի վկայությամբ՝ նրանցից մեկը իր «ասածները հրապարակել էր որպես հարցազրույց՝ հայտարարելով, թե իբր ստեղծվում է շեքսպիրյան գրադարան», և Ռ. Զարյանը դիմում է «ընթերցողներին ձեռք մեկնել այդ ազգագուտ նախաձեռնության իրականացմանը»⁸:

Եվ այսպես, 1964-ին, հավանաբար մայիսին կամ հունիսին Հայկական ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում ստեղծվեց Խորհրդային Միությունում առաջին և աշխարհում չորրորդ շեքսպիրյան գրադարանը: Արվեստաբանը կատարեց առաջին քայլը՝ նորաստեղծ գրադարան հանձնեց իր անձնական գրադարանից առանձնացրած ամբողջ «շեքսպիրյան» գրականությունը՝ Շեքսպիրի երկերը և դրամատուրգի ու նրա ստեղծագործությունների մասին գրված գրքերը՝ ընդամենը 168 անուն գիրք⁹: «168 գրքից միայն մեկն էր անգլերեն՝ Ռոուսի «Վիլյամ Շեքսպիր» ծավալուն աշխատությունը, որ նվեր էի ստացել 1963-ին Անգլիայի գիտության մի-նիստրի առաջին տեղակալ միստր Կվիրկից»¹⁰:

Շեքսպիրյան գրադարաններ

Հարկ է նշել, որ մինչ այդ աշխարհում գործում էին մի շարք շեքսպիրյան գրադարաններ: Դրանցից նշանավոր են՝

⁷ Զարյան 2012, 395:

⁸ Զարյան 2012, 395:

⁹ Զարյան 1967, 7:

¹⁰ Զարյան 1967, 8:

▪ **Վայմարի շեքսպիրյան գրադարանը** (*The Shakespeare Library in Weimar*), որը կազմում է Շեքսպիրի ծննդյան 300-ամյակի առթիվ դեռևս 1864 թ. ապրիլի 23-ին Գերմանիայի Վայմար քաղաքում հիմնադրված **Շեքսպիրագիտության գերմանական միության** (*Deutsche Shakespeare-Gesellschaft - German Shakespeare Societie*) բաղկացուցիչ մասը: Ճիշտ է, այն այնքան հարուստ հավաքածու չունի, բայց ուշագրավ է որպես շեքսպիրյան առաջին գրադարան, որն աշխարհում ավելի հայտնի դարձավ և մեծ համբավ ձեռք բերեց Շեքսպիրագիտության գերմանական միության գրեթե երկու հազար անդամների կատարած բեղուն գիտական հետազոտությունների և շեքսպիրյան տարեգրքերի հրատարակման շնորհիվ:

▪ **Շեքսպիրյան հուշասրահ-գրադարանը** (*Shakespeare Memorial Room*) ստեղծվել է 1882-ին Անգլիայի Բիրմինգհեմ քաղաքի գրադարանին կից: Այստեղ պահպանվում է Մեծ Բրիտանիայում առկա ամենանշանակալից և լավագույն շեքսպիրյան հավաքածուն, որն իր ծավալով աշխարհում երկրորդն է: Այդ հուշասրահում կան շատ հազվագյուտ ու թանկարժեք ցուցանմուշներ, այդ թվում՝ Շեքսպիրի առաջին հրատարակությունների մի քանի պատճեններ: Բիրմինգհեմյան հավաքածուն պարունակում է մեծ դրամատուրգի ստեղծագործությանը նվիրված ավելի քան 40 հազար կտոր գիրք (մոտ 100 լեզվով), ամսագրեր և տեսահոլովակներ, շեքսպիրյան թատերական ներկայացումների ավելի քան 6 հազար լուսանկար, 10 հազար ազդագիր ու ծրագիր և այլ նյութեր:

▪ **Ֆոլջերի շեքսպիրյան գրադարանը** (*Folger Shakespeare Library*) հիմնադրվել է ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնում 1932-ին: Դեռևս ուսանողական տարիներից ամերիկացի մեծահարուստ Հենրի Ֆոլջերը հետաքրքրվում է Շեքսպիրով և նրա ստեղծագործությամբ: 1885-ին Ֆոլջերը ձեռք է բերում շեքսպիրյան մեծածավալ գրքի (ֆոլիո) ֆաքսիմիլային առաջին հրատարակությունը: Հաջորդ հինգ տարիների ընթացքում Հենրի Ֆոլջերը հավաքում է դրամատուրգի ստեղծագործությունների հազվագյուտ հրատարակություններ՝ ձեռք բերելով Շեքսպիրի չորրորդ մեծածավալ գրքի 1685 թ. թանկարժեք և հազվագյուտ հրատարակությունը: Ֆոլջերի գրադարանն ունի գրապահոց, ընթերցասրահներ և սեփական թատրոն: Ֆոլջերի գրադարանը ոչ միայն սովորական գրադարան է, այլև թանգարան՝ թեմատիկորեն կապված և՛ Շեքսպիրի, և՛ XVII դ. անգլիական իրականության, և՛ շեքսպիրագիտության հետ: Գրադարանում պահպանվում են ձեռագրեր, հին և ժամանակակից կահույք, մետաղադրամների

հավաքածու, պարբերական հրատարակություններ և ամսագրեր, գեղանկարներ, քանդակներ, թատերական զգեստներ, տարբեր տարիների շեքսպիրյան թատերական ներկայացումների հազարավոր ծրագրեր և այլ արժեքավոր իրեր ու նյութեր (գրադարանում, ընդհանուր առմամբ, պահվում են ավելի քան 250 հազար գիրք, մոտ 50 հազար ձեռագիր, 250 հազար թատերական ազդագիր և այլ նյութեր):

Վաշինգտոնի և Բիրմինգհեմի շեքսպիրյան հավաքածուները կարծես թե լրացնում են մեկը մյուսին. Վաշինգտոնում է գտնվում հիմնականում XVI-XVII դդ. հավաքածու, իսկ Բիրմինգհեմում՝ XVIII-XX դդ.:

Ինչ վերաբերում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի շեքսպիրյան գրադարանին, ապա այն զգալիորեն նպաստեց 1960-1980-ական թվականներին Հայաստանում Շեքսպիրի երկերի, դրանց հայերեն թարգմանությունների ու հայ թատրոնում դրանց բեմադրությունների ուսումնասիրության գործին: Իսկ այդպիսի հետազոտություններ կատարելու համար հայ իրականության մեջ կային բոլոր նախադրյալները և հիմքերը, քանի որ Շեքսպիրի թատերգությունների՝ Հովհաննես Մասեհյանի հրաշալի թարգմանությունները, ինչպես նաև հայ անվանի դերասանների (Գևորգ Չմշկյան, Պետրոս Ադամյան, Սիրանույշ, Հովհաննես Աբելյան, Արուս Ոսկանյան, Վահրամ Փափազյան, Հրաչյա Ներսիսյան և ուրիշներ) շեքսպիրյան կերպարների անկրկնելի ու փայլուն մարմնավորումները վաղուց ի վեր համարվում էին հայ թատերական արվեստի փառապանծ էջերը՝ դառնալով հայ մշակույթի բաղկացուցիչ ու անբաժանելի մասը: Այդ տարիներին շեքսպիրյան գրադարանից օգտվում էին բազմաթիվ գրողներ, գրականագետներ, թարգմանիչներ, դերասաններ, գիտաշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլք:

«Շեքսպիրյան» նվիրատվություններ

Շեքսպիրյան գրադարանը ստեղծման առաջին իսկ օրվանից եղել է հիմնադրի՝ Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի ուշադրության կենտրոնում: Նա մշտապես հոգ էր տանում գրադարանի հավաքածուի համալրման ու հարստացման համար՝ ձեռք բերելով օտարերկրյա շատ արժեքավոր հրատարակություններ: Այսպես, օրինակ, մամուլից տեղեկանալով չեխ անվանի շեքսպիրագետ Զ. Ստրիբոնիի¹¹ «Շեքսպիրի

¹¹ Զդենեկ Ստրիբոնի (Zdenek Stribny)՝ 1922-2014, Պրահայի Կարլի համալսարանի, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի, Լեսթերի (Մեծ Բրիտանիա), Կոնստանցի և Գրայֆսվալդի (Գերմանիա) համալսարանների պրոֆեսոր, շեքսպիր-

պարմական դրամաները» գրքի մասին՝ Ռ. Զարյանը նամակով դիմում է չեխ շեքսպիրագետին, խնդրում ուղարկել այն՝ նրան տեղեկացնելով Երևանում շեքսպիրյան գրադարան ստեղծելու իր մտահղացման մասին: Զդենեկ Ստրիբոնին ուղարկում է ոչ միայն իր գիրքը, այլև Շեքսպիրի ողբերգությունների չեխերեն թարգմանությունների միատորյակը, ինչպես նաև 1883 թ. Պրահայում Յակով Մալիի (Jakub Maly, 1811-1885) թարգմանությամբ չեխերեն լույս տեսած «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգության հազվագյուտ հրատարակությունը¹²:

Իր մտահղացման մասին Ռ. Զարյանը նամակով հայտնել է նաև Համառոտական թատերական ընկերության գրադարանի տնօրեն Արտավազդ Աղաբեկյանին՝ հայցելով նրա օժանդակությունը: Նա «բարի ու մեղմ բնավորությամբ մարդ էր», «համեստ վերին աստիճանի» և «սիրով ընդառաջում էր իրեն դիմողներին, մանավանդ եթե խնդրատուն իր հայրենակիցներից էր»¹³: Զարյանն Աղաբեկյանին է ուղարկում Ռուսաստանում հեղափոխությունից առաջ լույս տեսած «Շեքսպիրյան» գրքերի ցուցակներ, իսկ Աղաբեկյանը կապվում է գրավաճառների հետ, անտրտունջ որոնում, գտնում է այդ գրքերը և ուղարկում Երևան՝ դա համարելով «իր պարտքը՝ ամեն կերպ օգնել, աջակցել այն օջախի բարգավաճմանը, որի անունը շեքսպիրյան գրադարան է...»¹⁴: Նշենք, որ շեքսպիրյան գրադարանում առկա՝ նախահեղափոխական շրջանի ավելի քան 50 կտոր ռուսերեն գրքերի մեծ մասն ուղարկել է Ա. Աղաբեկյանը:

Ռ. Զարյանը իր մտադրության և կատարած առաջին քայլերի մասին նամակներով տեղեկացնում է ուկրաինացի բանաստեղծ, ՈւԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Պավլո Տիչինային և ուկրաինացի թատերագետ, Կիևի թատերական թանգարանի փոխտնօրեն Իրինա Վանինա-Պոստոլովսկայային՝ խնդրելով ուղարկել Շեքսպիրի երկերի ուկրաիներեն թարգմանություններ: Նրանցից յուրաքանչյուրը շեքսպիրյան գրադարանին է նվիրում Շեքսպիրի երկերի եռահատորյակը (ուկրաիներեն)¹⁵:

յան հետազոտությունների հիմնադիր Չեխիայում, Շեքսպիրյան միջազգային ասոցիացիայի գործադիր կոմիտեի անդամ:

¹² Զարյան 2012, 395-398:

¹³ Զարյան 2012, 398:

¹⁴ Զարյան 2012, 399:

¹⁵ Զարյան 2012, 399-400:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի շեքսպիրյան գրադարանի կայացմանն ու զարգացմանն զգալիորեն աջակցել ու նպաստել են աշխարհի տարբեր երկրներում ապաստանած Սփյուռքի մեր հայրենակիցները, որոնք, տեղեկանալով Ռ. Զարյանի նախաձեռնության մասին, տարբեր լեզուներով հրատարակված բավական մեծաքանակ «շեքսպիրյան» գրքեր են ուղարկել նորաստեղծ գրադարանի համար: Թերթելով շեքսպիրյան գրադարանի մատյանը՝ մենք կրկին ու կրկին համոզվում ենք, որ այդ գործընթացը կրել և կրում է շարունակական բնույթ (հաճախ նույն անձը տարբեր ժամանակահատվածներում մի քանի անգամ տարբեր գրքեր է ուղարկել): Այսպես, փիլիսոփայության դոկտոր Արշակ Մեղրյանը՝ Գերմանիայի Ենա քաղաքից, ուղարկել է 1922-ին Մայնի Ֆրանկֆուրտում հրատարակված՝ գերմանացի փիլիսոփա և գրող Գուստավ Լանդաուերի (1870-1919) *Շեքսպիր* երկհատոր աշխատությունը, 1964-ին Վայմարում լույս տեսած «*Շեքսպիրի հոբեյանը - 1964*» ժողովածուն, Շեքսպիրագիտության գերմանական միության 1948-1965 թթ. հրատարակած շեքսպիրյան տարեգրքերը, Շեքսպիրի «*Դրամատիկական երկերի*» տասհատորյակը (Լայպցիգ, 1897) և այլն: Մեծաթիվ «շեքսպիրյան» գրքեր են ուղարկել ամերիկահայեր Սուրեն Սարգսյանը (Իլինոյս նահանգի *Էվանստոն* քաղաքից՝ գրքասեր, անտիկվար խանութի սեփականատեր, որը, ի դեպ, շատ գրքեր է ուղարկել ոչ միայն շեքսպիրյան, այլև հանրային և Երևանի պետական համալսարանի գրադարաններին) և Անդրանիկ Անդրեասյանը (Բոստոնից՝ գրող, «Պայքար» թերթի խմբագիր, 1909-1996): Իրանահայ բանաստեղծ և նկարիչ Դևր (Մարգար Դարաբեկյան, 1901-1976) շեքսպիրյան գրադարանին է նվիրել Հ. Մասեհյանի «*Հուլիոս Կեսար*» և «*Կորիոլան*» ողբերգությունների թարգմանությունների ձեռագրերը, Վենետիկի Մխիթարյանների հրատարակությունները¹⁶ (1962), ինչպես նաև 1962-ին Թեհրանում Հ. Մասեհյանի թարգմանությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «*Ռոմեո և Ջուլիետ*» ողբերգությունը:

Շեքսպիրյան գրադարանի հիմնադրումից մի քանի ամիս անց՝ նույն 1964 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հայաստանի երգի-պարի պետական համոյթը սփյուռքահայ «Նոր սերունդ» առաջադիմական կազմակերպու-

¹⁶ Ի դեպ, «*Կորիոլան*» ողբերգության վենետիկյան հրատարակությունը գրադարանին է նվիրել թարգմանչի քույրը՝ Զարուհի Քաջբերունի-Մասեհյանը՝ այն ուղարկելով Դևրի միջոցով: Այդ մասին Զ. Քաջբերունին համապատասխան գրառում է կատարել գրքի տիտղոսաթերթի վրա՝ նշելով նաև ամսաթիվը՝ 01.01.1966:

յան¹⁷ հրավերով մեկնում է երկարատև շրջագայության Սիրիա (Դամասկոս, Հալեպ, Հոմա) և Լիբանան (Բեյրութ, Տրիպոլի): Այդ շրջագայության ընթացքում հայկական պատմիրականության կազմում են եղել նաև Հայաստանի գրողների միության քարտուղար, բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր Ռուբեն Զարյանը և արձակագիր, լրագրող, «Պրավդա» թերթի Հայաստանի թղթակից Գուրգեն Առաքելյանը, որոնք մի շարք հանդիպումներ են ունեցել տեղի հայկական կրթօջախների և մշակութային կազմակերպությունների, արաբ մտավորականության ներկայացուցիչների հետ, նրանց պատմել Խորհրդային Հայաստանի նվաճումների մասին:

Ռ. Զարյանը, հանդիպելով ինչպես սփյուռքահայ մշակութային, կրթական, գործարար շրջանների, այնպես էլ արաբ մտավորականության ներկայացուցիչների հետ, նրանց նույնպես տեղեկացնում է իր ձեռնարկած գործի մասին: Ե՛վ շրջագայության ընթացքում, և՛ դրանից հետո շեքսպիրյան գրադարանին շատ նվիրատվություններ են անում թե՛ մեր հայրենակիցները, թե՛ արաբները: Այսպես, հալեպահայ հայտնի ակնաբույժ, մեծ արվեստասեր և «Մարտիրոս Սարյան» ակադեմիայի հիմնադիր Ռոբերտ Ճեպեճյանը (1909-2000) իր տուն է հրավիրում Զարյանին՝ Հալեպի արվեստասեր մարդկանց հետ ծանոթացնելու և «մայր հայրենիքի մասին» «աշխույժ հարց ու գրույց» ծավալելու նպատակով¹⁸: Ռոբերտ Ճեպեճյանը «իր տան հյուրերին» տեղեկացնում է Զարյանի «ծրագրի մասին, և, համարելով դա հայրենասիրական նախաձեռնություն», հայտնում է իր համոզմունքը, «թե ամեն մեկ հայի պարտքը լինի իր կարեցածին չափով օգնել այդպիսի շնորհակալ գործի հաստատմանը»¹⁹: Մի քանի օր հետո այդ հանդիպման մասնակիցներից մեկը՝ Պարգև Նազարյանը, Հալեպի «Լազար Նաճարյան-Գալուստ Կյուլպենկյան» վարժարանում՝ դասախոսություն կարդալու նպատակով հրավիրված Ռ. Զարյանին է նվիրում Շեքսպիր-

¹⁷ Նոր սերունդ՝ հայկական մշակութային միություն, ստեղծվել է 1955-ին Բեյրութում: Գործում է Հնչակյան կուսակցության հովանավորությամբ: 1956-1965 թթ. հրատարակել է «Արարատ» ամսագիրը, աչքի է ընկել «Արտավազը» և «Շիրվանզադե» թատերախմբերով, «Գարուն» երգչախմբով, հայկական ժողովրդական երգի-պարի համույթով, «Արեգ» մանկապատանեկան պարախմբով: Միության մասնաճյուղերը գործում են Դամասկոսում, Հալեպում, Կահիրեում, Սիդնեյում, Լոնդոնում, Տորոնտոյում, Լոս Անջելեսում և այլուր:

¹⁸ Զարյան 2012, 407-409:

¹⁹ Զարյան 2012, 412:

րի երկերի արաբական թարգմանության չորս հատորը: Այդ հանդիպման մի ուրիշ մասնակից՝ Սուրեն Գալենտերը, ինչպես և Ռոբերտ Ճեպեճյանը, հետագայում բազմաթիվ գրքեր են նվիրում շեքսպիրյան գրադարանին:

Շեքսպիրյան գրադարանի հարստացման գործում առանձնապես մեծ ավանդ է ներդրել հալեպահայ գործարար, «Բարոն» հյուրանոցի²⁰ (որտեղ իջևանել էր հայկական պատվիրակությունը) սեփականատեր Գրիգոր (Գոքո) Մազլումյանը, որի տանը Հալեպում նրան նվիրում է անգլերեն երեք գիրք՝ Շեքսպիրի մասին մենագրություններ: Մազլումյանի հանձնարարությամբ հետագայում Լոնդոնից և Օքսֆորդից շեքսպիրյան գրադարանի համար պարբերաբար բազմաթիվ գրքեր են առաքվել Ռ. Զարյանին, այդ թվում՝ «Շեքսպիրյան տարեգրքի» (*Shakespeare Survey*) համարները: Շեքսպիրյան գրադարանի համար Գ. Մազլումյանը երկու հարյուրից ավելի գիրք է ուղարկել նաև Սիրիայից Հայաստան գաղթած հայերի հետ²¹:

Արվեստի ինստիտուտի շեքսպիրյան գրադարանը հիմնականում հարստացել է նվիրատվությունների շնորհիվ: Գրադարանին գրքեր են նվիրել և՛ առանձին կազմակերպություններ, և՛ մասնավոր անձինք: Այսպես, գրադարանը գրքեր է ստացել մոտ քսան կազմակերպությունից՝ Գերմանական շեքսպիրյան ընկերությունից (Վայմար), Բիրմինգհեմի շեքսպիրյան գրադարանից, Ամերիկյան շեքսպիրյան ընկերությունից, Գալուստ

²⁰ Սիրիայի ամենահին բարձրակարգ և ամենաշքեղ հյուրանոցներից է, որը հիմնել է հայ գործարար Արմենակ Մազլումյանը 1911-ին: Հետագայում այդ հյուրանոցը նրա որդու՝ Գրիգոր Մազլումյանի ջանքերի շնորհիվ դարձել է ոչ միայն Սիրիայի, այլև ողջ Միջին Արևելքի ամենահրաշալի և առաջատար հյուրանոցներից մեկը՝ անխափան գործելով ավելի քան հարյուր տարի: Ժամանակին այն հյուրընկալել է շատ հայտնի ու բարձրաստիճան մարդկանց՝ տարբեր երկրների ղեկավարների (Շառլ դը Գոլ, Գամալ Աբդել Նասեր, Հաֆեզ ալ Ասադ, Քեմալ Աթաթյուրք, Ֆեյսալ 1-ին թագավոր և այլք), քաղաքական և հասարակական գործիչների (Թեոդոր Ռուզվելտ, Դևիդ Ռոքֆելլեր և ուրիշներ), գրողների (Ագաթա Քրիստի, Լոուրենս Արաբացի (Թոմաս Էդվարդ Լոուրենս), Գրիգոր Զոհրապ, Արամ Անտոնյան և այլք), առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինին, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանին, առաջին անգամ Ատլանտյան օվկիանոսի վրայով միայնակ թռիչք կատարող օդաչու Զարկ Լիդբերգին և շատ ուրիշների: Ի դեպ, Ագաթա Քրիստին, որն ամուսնու՝ անգլիացի հնագետ Մաքս Մալլոունի հետ հաճախ է այցելել Հալեպ, իր նշանավոր «Սպանություն Արևելյան ճեպընթացում» վեպի մի մասը 1930-ական թթ. գրել է այդ հյուրանոցում: Յավոք, «Բարոն» հյուրանոցը պատերազմի հետևանքով բավական տուժել է և այժմ չի գործում, իսկ դրա վերջին սեփականատերը՝ Արմեն Մազլումյան կրտսերը մահացել է 2016 թ. հունվարի կեսին:

²¹ Զարյան 2012, 418-419:

Գյուլբենկյան կոմիտեից (Լիսաբոն), Ռուսաստանի պետական գրադարանից (նախկինում՝ Մոսկվայի Վ.Ի. Լենինի անվան գրադարան) և այլ կազմակերպություններից: Շեքսպիրյան գրադարանին գրքեր են նվիրել ավելի քան 300 անձինք, այդ թվում՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին, հունգարացի անվանի արևելագետ, հայագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Էդմոնդ Շյուտցը, ուկրաինացի գրողներ՝ Պավլո Տիչինան, Սեմյոն Ժուրախովիչը և թարգմանիչ Գրիգորի Կոչուրը, ԽՍՀՄ Ժողովրդական արտիստներ Գրիգորի Կոզինցևը (Լենինգրադ), Վարդան Աճեմյանը և Վահրամ Փափազյանը, խորհրդային ականավոր թատերագետ Գրիգորի Բոյաչևը և շատ ուրիշներ:

Շեքսպիրյան գրադարանի համալրման համար Արվեստի ինստիտուտն իր միջոցներով ձեռք է բերել մոտ 350 գիրք: Նվիրատվություններ են արել նաև ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանը՝ ավելի քան 100 գիրք, Գալուստ Գյուլբենկյան կոմիտեն (Լիսաբոն)՝ մոտ 100, Լոնդոնի «Հայ տունը»՝ ավելի քան 20, Գերմանական շեքսպիրյան ընկերությունը (Վայմար)՝ մոտ 20, Ռուսաստանի պետական գրադարանը՝ մոտ 20 գիրք և այլ կազմակերպություններ:

Բազմալեզու Շեքսպիրը

Այժմ Արվեստի ինստիտուտի շեքսպիրյան գրադարանում պահվում է ավելի քան երեք հազար կտոր «շեքսպիրյան» գիրք՝ մոտ 40 լեզվով: Բացի Շեքսպիրի երկերի անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, հայերեն հրատարակություններից, գրադարանն ունի նաև լեհերեն, չեխերեն, ուկրաիներեն, լիտվերեն, էստոներեն, վրացերեն, արաբերեն, պարսկերեն, հինդի, եթովպերեն, վիետնամերեն, մոնղոլերեն և այլ լեզուներով տպագրություններ: Ցավոք, վերջին երկու տասնամյակում գրադարանը համալրվել է ընդամենը 70-80 գրքով:

Ընդհանուր առմամբ, շեքսպիրյան գրադարանը նաև թանգարան է, քանի որ այնտեղ, բացի գրքերից, պահվում են նաև հայ շեքսպիրագետների որոշ ձեռագրեր և իրեր: Ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ շեքսպիրյան գրադարանն ընդգրկում է հետևյալ բաղկացուցիչ մասերը.

- Շեքսպիրի երկերը, նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված անգլերեն աշխատություններ

- Շեքսպիրի երկերը՝ գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, եվրոպական այլ լեզուներով, արևելյան լեզուներով, հայերեն
- Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունների ձեռագրեր
- Հայ շեքսպիրագետներին վերաբերող իրեր, փաստաթղթեր և նյութեր:

Շեքսպիրյան գրադարանում այժմ կան շատ արժեքավոր և հազվագյուտ գրքեր: Դրանցից առաջին հերթին արժե հիշատակել Շեքսպիրի առաջին մեծածավալ գրքից (ֆոլիո) «*Հենրի Հինգերորդ*» քրոնիկի լոնդոնյան ֆաքսիմիլային հրատարակությունը²² (տե՛ս շեքսպիրյան գրադարանի մատյանի 180-րդ գրանցումը), որը 1964-ին Բեյրութում Ռ. Ջարյանին է նվիրել Բեյրութի ամերիկյան համալսարանի շրջանավարտ, «պատանի շեքսպիրագետ» (Ջարյանի բնութագրմամբ) Հովհաննես Փիլիկյանը (ծնվ. 1942), որը «զարգացած երիտասարդ էր, բազմակողմանի պատրաստության տեր՝ գրականություն և արվեստ, պատմություն, փիլիսոփայություն, գեղագիտություն և այլն: Գիտելիքները շատ-շատ էին: Դատողությունները, իր տարիքի հետ համեմատած, հասուն էին ու երբեմն շատ տարօրինակ»²³: Հ. Փիլիկյանը, հետագայում ավարտելով դրամատիկական արվեստի թագավորական ակադեմիան, դարձել է հայտնի բեմադրիչ, թատերագետ և թարգմանիչ: Հետաքրքիր է, որ Ռ. Ջարյանը, թեև գիտակցել է, թե այդ «հազվագյուտ հրատարակությունը» «ինչ արժեք է լինելու շեքսպիրյան գրադարանի համար», այնուամենայնիվ, չի համաձայնվել «վերցնել այդպիսի թանկ նվեր», իսկ Հ. Փիլիկյանը արտահայտել է հետևյալ միտքը. «Եթե մարդուն հարգում ես, ուրեմն նվերդ էլ խանութից առած չպետք է լինի, որ ամեն ոք կարող է անել, այլ քո ունեցածից, այն, որից բաժանվելիս ափսոսանքի զգացում ունենաս»²⁴: Շեքսպիրյան գրադարանի հազվագյուտ և արժեքավոր գրքերից են *Նոր ստանդարտ* (1-12 հատոր) և *Բրիտանիկա* (1-32 հատոր) հանրագիտարանները (*The New Standard Encyclopaedia*, edited by William A. Colledge, v. 1-12, New York, 1905; *The Encyclopaedia Britannica*, Eleventh Edition, v. 1-32, Cambridge, 1910), իսկ Շեքսպիրի ստեղծագործություններից արժե հիշատակել հատկապես հետևյալ հրապարակումները.

²² Ռ. Ջարյանի գրքում սխալմամբ նշվում է՝ ««Լիր արքայի» անգլիական հազվագյուտ հրատարակություն» (հմմտ. Ջարյան 2012, 441):

²³ Ջարյան 2012, 441:

²⁴ Ջարյան 2012, 441-442:

- Շեքսպիրի գործերի առաջին հայերեն հրատարակությունը՝ *Ռոմեո և Ջուլիետ* (1866, Ջմյուռնիա, թարգմանիչ՝ Արամ Տետեյան (1822-1901))
 - *Իզոլոր տեղը մեծ աղմուկ* (1888, Թիֆլիս, թարգմանիչ (գերմաներենից)՝ Հովհաննես Լալայան)
 - *Համլետ* (1889, Թիֆլիս, թարգմանիչ՝ Սենեքերիմ Արծրունի (1847-1920))
 - *Մակբեթ* (1892, Թիֆլիս, թարգմանիչ՝ Ստեփան Մախապյանց)
 - *Համլետ, Ռոմեո և Ջուլիետ, Վենետիկի վաճառականը, Լիր արքա* (համապատասխանաբար՝ 1894, 1896, 1897, 1898, Թիֆլիս, թարգմանիչ՝ Հովհաննես Մասեհյան)
 - *Օթելլո* (1904, Գահիրե, թարգմանիչ՝ Գ.Հ. Փափազյան)
 - *Հենրի Հինգերորդ* քրոնիկի ֆաքսիմիլային հրատարակությունը՝ *առաջին մեծածավալ գրքից* (անգլերեն)՝ William Shakespeare, *Henry V*, A facsimile of *The First Folio* text, London, 1900
 - *Ինչպես կուզեք* կատակերգության հին ուղղագրությամբ տարբերակը՝ 1623-ի *առաջին մեծածավալ գրքից* (անգլերեն)՝ *The Old Spelling Shakespeare "As You Like it"*, from *The First Folio* of 1623, London, 1908
 - *Դրամատիկական երկեր* (անգլերեն)՝ *The Dramatic Works of William Shakespeare*, London-Paris-New York, 1836
 - *Երկեր* (անգլերեն)՝ *The Works of William Shakespeare*, London, 1868
 - *Երկեր*, յոթ հատորով (անգլերեն)՝ *The Works of William Shakespeare*, v. I-VII, Leipzig, 1868
 - *Երկեր*, տասներկու հատորով (անգլերեն)՝ *The Works of Shakespeare*, v. I-XII, Boston, 1885
 - *Երկերի լիակատար ժողովածու*, ութ հատորով (անգլերեն)՝ *The Complete Works of Shakespeare*, in eight volumes, New York, 1901 և բազմաթիվ այլ գրքեր:
- Շեքսպիրի և նրա ստեղծագործությունների մասին գրադարանի հազվագյուտ և արժեքավոր գրքերից կարելի է առանձնացնել հետևյալ աշխատությունները.
- Պետրոս Հ. Ադամեան, *Շեքսպիր եւ իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները*, Թիֆլիս, 1887
 - Էդուարդ Դաուդեն (1843-1913, իռլանդացի կենսագիր, բանաստեղծ, Դուբլինի Տրինիտի քոլեջի պրոֆեսոր, շեքսպիրագետ), *Սկսնակ Շեքսպիրը* (անգլերեն)՝ Edward Dowden, *Shakespeare Primer*, London, 1877

▪ Մարի Քոուդեն Կլարկ (1809-1898, անգլիացի շեքսպիրագետ) *Շեքսպիրի երկերի լիակատար համադարձում* (անգլերեն)՝ Mary Cowden Clarke, *The Complete Concordance to Shakespeare*, London, 1879 և այլն:

Հատկանշական է, որ շեքսպիրյան գրադարանը, բացի «շեքսպիրյան» գրքերից ու պարբերականներից, հավաքում և պահպանում է հայ շեքսպիրագետների ծեռագրեր և իրեր, ինչպես նաև շեքսպիրյան թեմաներով ստեղծված երաժշտական ստեղծագործությունների նոտաներ, ձայնապնակներ, սկավառակներ և այլ նյութեր: Դրանցից արժե հիշատակել Հովհաննես Մասեհյանի, Վարդգես Սուրենյանցի, Եղիշե Չարենցի, Վահան Թոթովենցի, Խաչիկ Դաշտենցի, Հենրիկ Սևանի, Վահրամ Փափագյանի և այլոց՝ Շեքսպիրի ստեղծագործություններից կատարած թարգմանությունների ծեռագրերը, Հ. Մասեհյանի երկու ակնոցը, ոսկեծայր գրիչը, ճապոնական բաժակը, մետաքսե թաշկինակը և այլն:

«Գիտության, արվեստագիտության, շեքսպիրագիտության կազմակերպիչ... մի աննկուն նախաձեռնող ոգի» Ռ. Ջարյանի (որն «անփոխարինելի դեր խաղաց շեքսպիրյան հազվագյուտ գրադարանի»²⁵ ստեղծման գործում) մահից հետո՝ 1994-ին, այն վերանվանվեց նրա անունով՝ Ռ. Ջարյանի անվան շեքսպիրյան գրադարան:

Արձանագրենք նաև, որ իրենց աշխատություններում շեքսպիրյան գրադարանին անդրադարձել են Ռ. Ջարյանը²⁶, Ն. Գաբրիելյանը²⁷, Բ. Անդրեասյանը²⁸, Ա. Ասատրյանը²⁹ և այլ հեղինակներ:

Եզրակացություններ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ռ. Ջարյանի անվան շեքսպիրյան գրադարանը պատշաճ վերաբերմունքի և գրադարան-թանգարանի ցուցանմուշները հետազոտողին առավել մատչելի դարձնելու պարագայում կարող է դառնալ հայ երիտասարդ շեքսպիրագետների նոր սերնդի ուսուցման, դաստիարակման և ձևավորման կենտրոն, որտեղ նրանք կարող են իրականացնել նոր շեքսպիրագիտական ուսումնասիրություններ, կատարել թարգմանություններ, գրել աշխատություններ՝ շարունակելով, զար-

²⁵ Հախվերդյան 2000, 168:

²⁶ Ջարյան 1967, 6-8, Ջարյան 2012, 392-401, 412-419, 440-442:

²⁷ Գաբրիելյան 1967, 32-33:

²⁸ Անդրեասյան 1981, 4-9:

²⁹ Ասատրյան 2010, 226-229:

գացնելով և հարստացնելով Հ. Մասեհյանի, Ռ. Զարյանի և հայ մյուս շեքսպիրագետների թողած ժառանգությունը: Համոզված ենք, որ ապագայում կունենանք հայ շեքսպիրագետների նոր համաստեղություն՝ նոր Հովհաննես Մասեհյան, նոր Պետրոս Ադամյան, նոր Վահրամ Փափագյան, նոր Ռուբեն Զարյան, քանի որ «Շեքսպիրը կուռք չի եղել մեզ համար, ոչ էլ լույս մշակութային երևույթ, այլ կենդանի իրականություն»³⁰:

Գրականություն

- Անդրեասյան Բ. 1981, Շեքսպիրը հայերեն (մատենագիտություն), Սովետական գրող, Երևան, էջ 4-9:
- Առաքելյան Վ. 1964, Շեքսպիրի տաղանդավոր թարգմանիչը, Գրական թերթ, 24 ապրիլի:
- Ասատրյան Ա. 2010, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50, Երևան, «Գիտություն», էջ 226-229:
- Բորյան Գ. 1964, Հավերժ ժամանակակիցը, Սովետական Հայաստան, 25 ապրիլի:
- Գաբրիելյան Ն. 1967, Շեքսպիրի արևելյան հայրենիքը, Սովետական Հայաստան, N 2, էջ 32-33:
- Զարյան Ն. 1964, Անշեշ հանճարը, Գրական թերթ, 1 մայիսի:
- Զարյան Ռ. 2012, Մայրամուտից առաջ. Ինքնապատում, հ. երրորդ, Երևան, «Գիտություն», 528 էջ:
- Զարյան Ռ. 1967, Աշխարհում չորրորդը՝ շեքսպիրյան հայկականը, Կուլտուրալոսավորական աշխատանք, դեկտեմբեր, էջ 6-8:
- Զարյան Ռ. 1964, Ադամյանը շեքսպիրագետ, Գրական թերթ, 24 ապրիլի:
- Հախվերդյան Լ. 2000, Մենք և մեր դժվար օրերը, հոգվածներ, Երևան, «Վան Արյան», 255 էջ:
- Հովհաննիսյան Հր. 1964, Հավերժ մարդկության հետ. Գրական թերթ, 1 մայիսի:
- Մարդկության մեծ բարեկամը 1964, Գրական թերթ, 1 մայիսի:
- Սարյան Մ. 1966, Շեքսպիրական, հայկական շեքսպիրյան տարեգիրք, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 407 էջ:
- Սողոմոնյան Ս. 1964, Հանճարեղ անգլիացին, Սովետական Հայաստան, 25 ապրիլի:
- Վազներ Լ. 1980, Այդպիսի մարդիկ չեն ծերանում. Ռուբեն Զարյան. Հայկական թատերական ընկերություն ՀԹԸ, ժողովածու, կազմող և խմբագիր՝ Բաբկեն Հարությունյան, ՀԹԸ, 174 էջ:
- Փափագյան Վ. 1964, Շեքսպիրը, Գրական թերթ, 24 ապրիլի:

³⁰ Սարյան 1966, 5:

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԵԼՈՒՄ. ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

Ակադեմիկոս Ռ. Զարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով 1964 թ. Հայկական ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում հիմնվեց Խորհրդային Միությունում առաջին և աշխարհում չորրորդ շեքսպիրյան գրադարանը: Արվեստաբանը նորաստեղծ գրադարան հանձնեց իր ամբողջ «շեքսպիրյան» գրականությունը՝ 168 անուն գիրք: Շեքսպիրյան գրադարանը նշանակալի դեր ունի 1960-1980-ական թթ. Հայաստանում Շեքսպիրի երկերի, դրանց հայերեն թարգմանությունների ու հայ թատրոնում դրանց բեմադրությունների ուսումնասիրության գործում: Գրադարանի հավաքածուն հարստացել է աշխարհի տարբեր ծայրերից ինչպես բազմաթիվ հայերի, այնպես էլ օտարազգիների կատարած ներդրումներ շնորհիվ, որոնք գրադարանին են նվիրել շատ արժեքավոր ու հազվագյուտ հրատարակություններ, ձեռագրեր և իրեր: Այժմ շեքսպիրյան թանգարան-գրադարանում պահվում է ավելի քան 3000 ցուցանմուշ՝ 40 լեզվով:

Բանալի բաներ՝ գրադարան, Ռ. Զարյան, Շեքսպիր, շեքսպիրյան գրադարան, ներդրումներ, գիրք, հավաքածու:

ШЕКСПИР В ЗЕРКАЛЕ МИРОВОЙ КУЛЬТУРЫ: ШЕКСПИРОВСКАЯ БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА

Анаит Бекарян

Резюме

В 1964 г. академиком АН Армении Рубеном Заряном при Институте искусств АН Армянской ССР была создана первая в Советском Союзе и четвертая в мире шекспировская библиотека, которой академиком Р. Заряном из личной библиотеки было предоставлено 168 книг, имеющих отношение к Шекспиру и шекспироведению в целом. Эта ценная коллекция включала как творчество Шекспира, так и переводы его произведений на армянский язык, а также шекспироведческие исследования. Неоценима роль библиотеки в изучении художественного наследия Шекспира в Армении в 1960-1980 гг., чему во многом способствовали переводы произ-

ведений классика английской литературы на армянский язык и постановки его пьес на армянской сцене. Огромен вклад армян диаспоры, а также иностранцев в дело обогащения и комплектации фондов шекспировской библиотеки. Усилиями отдельных лиц библиотека пополнилась ценными раритетными изданиями, рукописями и предметами. В настоящее время в библиотеке-музее хранится более 3000 единиц литературы почти на 40 языках мира.

Ключевые слова – библиотека, Зарян, Шекспир, шекспировская библиотека, вклад, книга, коллекция.

SHAKESPEARE IN THE MIRROR OF WORLD CULTURE: SHAKESPEAREAN LIBRARY AT THE INSTITUTE OF ARTS NAS RA

Anahit Bekaryan

Abstract

The paper addresses the background factors that encouraged academician Rouben Zaryan to found a Shakespearean library at the Institute of Arts, in the Academy of Sciences of Armenian Socialist Republic. The library was the first in its kind in the Soviet Union and the fourth in the world. The paper dwells on the Shakespearean collection of 168 pieces that Zaryan donated to the newly-founded library. The paper also elaborates on how the library contributed to the study and translations of Shakespearean works in Armenia between 1960 and 1980, as well as the staging of Shakespeare's plays in the Armenian theatre. In their intention to replenish the library, both Armenians and foreigners from different parts of the world made contributions and donations of valuable and exclusive publications to the library. At present Shakespearean library houses more than three thousand exhibits in 40 languages.

Key words – library, Zaryan, Shakespeare, Shakespearean library, exhibits, book, collection.